ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՎԱԾ ԿՈԼԵԳԻԱ

ՈՐՈՇՈՒՄ

12 փետրվարի 2014 թվականի թիվ 10/13 քաղ. Նովոպոլոցկ

ՄԱՔՍԱՅԻՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՔՍԱՅԻՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՌԻՍԿԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԻՐԱՌՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅԱՆ ՄԵՋ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՁԵՎԵՐԸ ԵՎ ԿԱԶՄԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիան *որոշեց*՝

1. Հաստատել Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառման արդյունքների վերաբերյալ հաշվետվության ձևը (կցվում է):

2. Շարադրել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 5/9 որոշման թիվ 1 հավելվածը՝ սույն Որոշման հավելվածի համաձայն:

3. Անվավեր ճանաչել Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի 2012 թվականի սեպտեմբերի 5-ի թիվ 5/9 որոշման թիվ 2 հավելվածը:

Նախագահ՝ **Ա. Յու. Բելյանինով**
Նախագահի տեղակալ՝ **Ա.Ֆ. Շպիլևսկի**
Նախագահի տեղակալ՝ **Գ.Կ. Ամրին**

Հավելված
Մաքսային միության անդամ պետությունների մաքսային ծառայությունների միավորված կոլեգիայի թիվ 10/13 որոշման

Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի Հանրապետության և Ղազախստանի Հանրապետության մաքսային մարմինների կողմից ռիսկերի կառավարման համակարգի կիրառման արդյունքների վերաբերյալ հաշվետվության ձևը

Տեղեկություններ ՌԿՀ-ի կիրառման մասին _____ մաքսային մարմիններում (ՌԴ, ՂՀ, ԲՀ) 201__ թվականի ___ եռամսյակի ընթացքում									
Ռիսկերի նվազեցմանն ուղղված միջոցների կիրառման փուլերը	Տեղափոխման ուղղությունը	Տեղափոխված ընդհանուր խմբաքանակը՝*	Հայտնաբերված ռիսկերով խմբաքանակների թիվը	Հայտնաբերված ռիսկերով խմբաքանակների չափաբաժինը.% *(վանդակ 4/ վանդակ 3) *100*	Մաքսային զննում անցած խմբաքանակների թիվը	Մաքսային զննում անցած խմբաքանակների չափաբաժինը, % *(վանդակ 6/ վանդակ 3) *100*	Հայտնաբերված իրավախախտումների թիվը		Հավելագրված մաքսային վճարների գումարը**
							Վարչական	Քրեական	
1	2	3	4	5	6	1	8	9	10
Ապրանքների մաքսային հայտարարագրումը՝ ԱՀ-ի ներկայացմամբ	Ներմուծում								
	Արտահանում								

Մաքսային գործառնու-թյուններն անցակետերում (բացառությամբ ապրանքների հայտարարա-գրումը՝ ԱՀ-ի ներկայացմամբ)	Ներմուծում								
	Արտահա-նում								

* ապրանքների խմբաքանակի տակ հասկացվում է այն ապրանքների ամբողջությունը, որոնց նկատմամբ ձևակերպված է մեկ մաքսային փաստաթուղթ (օրինակ՝ ապրանքներ մասին հայտարարագիր, տարանցիկ փոխադրման հայտարարագիր).

** ԱՄՆ դոլարով՝ հաշվետու ժամանակահատվածի համար միջին կշռված փոխարժեքով